ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱԳԱԾ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արագած համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Արագած, 0231-6-16-11 aragats.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

02 ՄԱՅԻՍԻ 2019թվականի N 47-Ա

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ամավիրի մարզի Արագած համայնքի բնակիչ՝ Ամար Հասոյանը դիմել է Արագածի համայնքապետարան իրեն սեփականության իրավունքով պատկանող /հիմք սեփականության վկայական 19042019-04-0045/ Արագած 32-րդ փողոց թիվ 4 հասցեում գտնվող օժանդակ շինությունների /արտաքին մակերեսը ընդամենը կազմում է 327,61 քմ, ծածկոցինը՝ 40,56 քմ, իսկ պարիսպինը՝ 21,14քմ/ օրինականացնելու խնդրանքով:

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 4-րդ կետով, ՀՀ կառավարության 2003թ. ապրիլի 17-ի թիվ 470-Ն և 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշումներով, նկատի ունենալով որ կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք և չի գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում և հիմք ընդունելով <<Արծրունի Գեղամյան>> ԱՁ-ի կողմից տրված եզրակացությունը. Որոշում եմ՝

1. *ՀՀ Արմավիրի մարզի Արագած համայնքի բնակիչ՝ Ամար Հասոյանին պատկանող՝ Արմավիրի մարզ Արագած համայնք 32 փողոց թիվ 4 հասցեում գտնվող օժանդակ շինությունների արտաքին՝ 327,61քմ, ծածկոցիը՝ 40,56քմ, իսկ պարիսպինը՝ 21,14քմ ճանաչել օրինական՝ համաձայն <<Արծրունի Գեղամյան>> ԱՁ-ի կողմից տրված հողամասերի և շինությունների հատակագծերի::*
2. *Ինքնակամ կառույցի օրինականացման վճարը կազմում է 1,0քմ համար օժանդակ շինություն 516 դրամ /516*327,61քմ=169.000 դրամ, ծածկոց 516*40,56քմ= 21,000դրամ, պարիսպ 516*21.14=11,000դրամ/, ընդամենը 201,000 /երկու հարյուր մեկ հազար/ ՀՀ դրամ վճարը:*
3. *Որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված վճարը Ամար Հասոյանը պետք է 60-օրյա ժամկետում վճարի Արագած համայնքի այլ հիմնական միջոցների եկամուտների 900325163203 հաշվեհամարին: Չվճարելու դեպքում որոշումը համարել ուժը կորցրած:*

4. *Սույն որոշումից բխող գույքային իրավունքները ենթակա են գրանցման ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանման կողմից:*
5. *Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:*

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ա.ԿԱՄԱՎՈՍՅԱՆ**

2019թ.մայիս 02
գ.Արագած